ՆԱԽԱԳԻԾ 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Մ-10-Շատին-Կարմրաշեն –Պետական խճուղի ավտոմոբիլային ճանապարհի կմ 1+050-ում փլվածքային տեղամասի վերականգնման անհրաժեշտությունը, ղեկավարվելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի համայնքների միմյանց և Հայաստանի Հանրապետության մյուս բնակավայրերի միջև տրանսպորտային կապը ապահովելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Մ-10-Շատին-Կարմրաշեն- պետական խճուղի ավտոմոբիլային ճանապարհը շրջանցող նոր ավտոմոբիլային ճանապարհի կառուցման համար սույն որոշման հավելվածում նշված տարածքների նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) նոր ճանապարհի կառուցման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի շահերից, քանի ճանապարհի կառուցումը կապահովի Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի համայնքների միմյանց և Հայաստանի Հանրապետության մյուս բնակավայրերի միջև տրանսպորտային կապը, բնակավայրերի միջև անխափան երթևեկությունը, կենսական նշանակություն ունեցող այլ պայմանների ստեղծումը .

2) ճանապարհաշինարարական ծրագրի արդյունավետ իրականացումը չի կարող ապահովվել՝ առանց հավելվածում նշված սեփականության օբյեկտների օտարման, քանի որ դրանք գտնվում են ծրագրով նախատեսված՝ կառուցվող ճանապարհի անմիջական հարևանությամբ, և անհնար է ապահովել ծրագրով նախատեսված ճանապարհների կառուցումն ու ճանապարհների համար կենսական նշանակություն ունեցող մյուս պայմանները՝ առանց դրանց օտարման.

3) սույն որոշման հավելվածում նշված տարածքների նկատմամբ ճանաչված բացառիկ՝ գերակա հանրային շահը չհիմնավորված վնաս չի պատճառում նշված տարածքների սեփականատերերին.

4) բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքները ձեռք բերող է Հայաստանի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանը:

5) բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում առկա՝ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի՝ պետության և հասարակության կարիքների համար գույքի օտարման գործառույթների իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետարանը հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից.

6) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետ սահմանել 2011 թվականի հուլիսի 1-ը՝

7) սեփականության օտարման գործառույթների իրականացումը համակարգող և պատասխանատու պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետն է.

8) սեփականության օտարման գործընթացն իրականացվում է «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին», «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշման պահանջներին համապատասխան:

2. Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզպետին՝

1) գերակա հանրային շահ ճանաչված տարածքների եւ դրանցում առկա սեփականության օբյեկտների նկարա·րության արձանա·րության կազմման աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 25-ի N 108-Ն որոշմամբ սահմանված կար·ով եւ որոշմամբ սահմանված նկարա·րության արձանա·րության օրինակելի ձեւով:

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող 7-օրյա ժամկետում սույն որոշումը պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին և օտարվող սեփականության նկատմամբ պետական գրանցում ունեցող գույքային իրավունքներ ունեցող անձանց:

3.Հայաստանի Հանրապետության տրասնպորտի և կապի նախարարին՝

ճանապարհի վերակառուցման համար երկրաբանահետախուզական ու նախագծային աշխատանքներն իրականացնել Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ իրականացվող <Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ծրագրի գծով հատկացումների՝ այդ թվում մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումների շրջանակներում կամ Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով 2012 թվականի ծրագրեի համար նախատեսվելիք ֆինանսավորման կանխորոշիչ չափաքանակների շրջանակներում:

4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին՝

երկու ամսվա ընթացքում ապահովել փլուզման գոտում գտնվող խմելու և ոռոգման ջրագծերի տեղափոխման աշխատանքների կատարումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հավելված
ՀՀ կառավարության
< > որոշման

Ց Ա Ն Կ

ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

NN ը/կ	Ազգանունը, անունը	Լոտը	Կոդը (կադաստրային զոնա)
1	**2**	**3**	**4**
1.			
2.			
3.			
4.			

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության << Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՑԱՆԿ

Իրավական ակտերի,որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության << Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման նախագիծը

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման նախագիծը մշակվել է <<Իրավական ակտերի մասին>>, < Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան:

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության կառավարության << Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման նախագծի հեղինակների /մշակողների/

Հայաստանի Հանրապետության կառավարության <<Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին >> որոշման նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության կողմից:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ